

Տիգրան Բ.ի եւ Տիգրան Դ.ի մէկ քանի անտիպ, միական դրամներ

ԱՍՊԵՏ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

ՏԻԳՐԱՆ Բ. (Բ.Ա. 95-55 ՔՔ.)

Հայոց Տիգրան Բ. Արտաշէսեան թագաւորը, պատմութեան մէջ յիշատակուած է զանազան անուններով՝ Տիգրան Բ., Տիգրան Բ. Մեծն, Տիգրան Մեծ եւ Մեծն Տիգրան: Տիգրան Բ. դահակալեց մօտաւորապէս քառասուն տարիներ եւ մեծամեծ նուաճումներ արձանագրեց քաղաքական եւ մշակութային մարդերու մէջ: Անոր լիշխանութեան օրերուն Հայաստան իր հարստութեան եւ բարգաւաճումի գաղաթնակէտին հասաւ: Հետեւաբար՝ տրամաբանական էր որ հարուստ թագաւոր մը ունենար նաեւ ճոխ եւ հարուստ դրամահատութիւն:

Տիգրան Բ.ի դրամները բաւական դիւրաւ կը զանազանուին արտաշէսեան այլ դրամներէ: Անոր դրամները զատորոշող եւ բնորոշող յատկանիշներն են՝ հայկական խոյրով դլուխ՝ աջ դարձած, անմօրուս՝ անիլուած երես: Առ հասարակ, Տիգրան Բ.ի տիտղոսները կամ պատուանունները (honorifics), արձանագրուած են ուղղահայեաց եւ զուգահեռ սիւնակներով, եւ երեք ձեւերով՝

1. ΒΑΣΙΛΕΩΣ//ΤΙΓΡΑΝΟΥ [ՎԱՍԻԼԵՒՍ ՏԻԳՐԱՆՈՒ]: Արքայ Տիգրանի
2. ΒΑΣΙΛΕΩΣ//ΒΑΣΙΛΕΩΝ/ΤΙΓΡΑΝΟΥ [ՎԱՍԻԼԵՒՍ ՎԱՍԻԼԷՈՆ ՏԻԳՐԱՆՈՒ]: Արքայից Արքայ Տիգրանայ
3. ΒΑΣΙΛΕΩΣ/ΒΑΣΙΛΕΩΝ//ΤΙΓΡΑΝΟΥ [ՎԱՍԻԼԵՒՍ ՎԱՍԻԼԷՈՆ ՏԻԳՐԱՆՈՒ]: Արքայից Արքայ Տիգրանայ (դիւրքի փոփոխութեամբ):

ՏԻԳՐԱՆ Բ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ : ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Երես. Թագաւորին կիսանդրին աջ դարձած՝ զլխուն հայկական խոյր եւ արքայական ասպրոշ : Շրջափակ դարդը՝ մարդարտաչար բոլորակ մը :

Կռնակ. Անտիոքի Բախար աջ դարձած՝ ժայռի մը վրայ բազմած, աջ ձեռքով արմաւենիի ճիւղ մը բռնած : Ոտքերուն տակ՝ Ուրնդես դեռի ուղին՝ մերկ, բազկատարած, լողալու գլխի մէջ : Խորագիրը՝ երկու ուղղահայեաց սիւնակներով, աջին՝ դէպի վար, [ՎԱ]ՍԻԼԵ[ԻՍ]², ձախին՝ դէպի վար, ՏԻԳՐԱՆ[ՈՒ] :

Գաշտին մէջ՝ Բախտին աջին՝ Ի տառը, ձախին՝ Δ տառը : Δ տառը յաճախ կը տեսնուի Տիգրանի Բ.ի քառադրամներուն վրայ :

Կշիւ՝ 5·50 տրամագիծ՝ 2·20 :

2. Երես. Թիւ 1-ի նման, բայց բացակայ են արծիւները : Խոյրին կեղերներ կը տեսնուի այլափոխուած խոշոր աստղ մը, որուն աջ կողմը անծանօթ առարկայ մը կայ : Ըստ աշխարհահռչակ դրամագէտ Հ. Սերիկի, ան կրնայ պարզ եղջիւր մը ըլլալ : Ըստ մեր կարծիքին՝ նոյն առարկան է, որ կը տեսնուի Տիգրան Բ.ի Թէ՛ պղինձ եւ Թէ՛ արծաթ դամասկոսեան տիպի դրամներուն վրայ :

Կռնակ. Թիւ 1-ի նման : Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձախին՝ դէպի վար, ՏԻԳՐԱՆՈՒ : Վարը՝ եղրամասին մէջ Ω տառերը : Շրջափակ դարդը մարդարտաչար բոլորակ մը : Առ հասարակ այս տիպի դրամներուն վրայի գրութիւնը՝ «Արքայից Արքայ Տիգրանայ» կ'ըլլայ, սակայն այս դրամին վրայ «Արքայ Տիգրանայ» է՝ անստեղեան քառադրամներուն նման : Պտուկեան այս դրամին զրեթէ յար եւ նման տիպով քառադրամ մը հրատարակած է վերջերս լոյս ընծայած հատորին մէջ³ :

1. Յօդուածին մէջ նկարագրուած բոլոր դրամներն ալ պղինձ են, եւ՝ յունատառ. անոնք մաս կը կազմեն հեղինակին հաւաքածոյին : Դրամներուն կշիւը տրուած է կրամով, իսկ տրամագիծը՝ սանիմետրով : Դրամներու նկարագրութեան պարագային՝ յիշուած քուսնակները կը համապատասխանեն յօդուածին մէջ (էջ 256-257) գետեղուած տախտակներուն վրայ գտնուող պատկերներուն քիւերուն :

2. Դրամներուն վրայ գտնուող յունատառ արձանագրութիւնները տրուած են հայերէն տառադարձութեամբ :

3. P. Z. Bedoukian, **Coinage of the Artaxiads of Armenia**, London, 1978, p. 48, no. 10.

3. Երես. դրեթէ թիւ 1-ի նման :

Կոնակ. թիւ 1-ի նման : Վերը՝ Բախտին դէմքին դիմաց Z տառը կրկնադրոշմուած : Աջին՝ վերէն վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձախին՝ գրու-
թիւնը անընթեռնի :

Կշիռ՝ 6.20, տրամագիծ՝ 2.10 :

4. Երես. դրեթէ թիւ 1-ի նման : Շրջափակ զարդը՝ մարզար-
տաշար բոլորակ մը :

Կոնակ. թիւ 1-ի նման, բայց Բախտին եւ Որոնդես դետի ո-
դիւն միջեւ ΡΟΔ տառերը : Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձա-

N

խին՝ ՎԱՍԻԼԵՆ/ՏԻԳՐԱՆ[ՈՒ] : Այս դրամը կը թուի տպուած ըլլալ
դրամի մը վրայ, որ հաւանաբար նախապէս եղած է փիւնիկեան կամ
հռոմէական դրամ մը :

Կշիռ՝ 5.46, տրամագիծ՝ 2.00 :

5. Երես. թիւ 2-ի նման : Շրջափակ զարդը՝ մարզարտաշար բո-
լորակ մը :

Կոնակ. Հաւատարմութիւնը (կամ Վստահութիւնը) դէպի ձախ
կ'ընթանայ, աջ ձեռքով պսակ մը կ'երկարէ, իսկ ձախով՝ ամաղթեղ-
ջիւր մը բռնած : Աջին՝ դէպի վար, [ՎԱ.]ՍԻԼ[ԵԻՍ], ձախին՝ դէպի
վար, [Տ]ԻԳՐԱՆՈՒ :

Կշիռ՝ 6.30, տրամագիծ՝ 1.60 :

6. Երես. թիւ 5-ի նման :

Կոնակ. թիւ 5-ի նման : Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձախին՝
դէպի վար, ՏԻԳՐԱՆՈՒ :

Կշիռ՝ 4.50, տրամագիծ՝ 1.80 :

7. Երես. թիւ 5-ի նման : Ձախին՝ դաշտին մէջ, խոյրին ետեւը
A տառը :

Կոնակ. թիւ 5-ի նման :

Կշիռ՝ 4.38, տրամագիծ՝ 1.50 :

8. Երես. Թաղաւորին կիսանդրին աջ դարձած՝ ղլխուն հայկա-
կան խոյր եւ արքայական ապարօշ : Շրջափակ զարդը՝ մարզարտաշար
բոլորակ մը :

Կոնակ. Յաղթանակը դէպի ձախ կ'ընթանայ. աջ ձեռքով պսակ
մը կ'երկարէ : Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձախին՝ դէպի վար,
ՏԻԳՐԱՆՈՒ : Ձախին՝ դաշտին մէջ N K տառերը, ծածկադրութիւն
մը, որ հաւանաբար յունարէն օմեկա եւ սիկիմա տառերու միատեղ
ձեւն է :

Կշիռ՝ 7.35, տրամագիծ՝ 2.30 :

9. Երես. Թաղաւորին ղլուխը աջ դարձած՝ հայկական խոյրով
եւ ապարօշով :

Առնակ. Յաղթանակը ոչ թեև ունի ոչ ալ ձեռք, Աթենայի Յաղթանակին նման, դէպի ձախ կ'ընթանայ: Ան քանդակուած է տարօրինակ ոճով, խորունկ շերտերով կամ ակօսներով: Աջին՝ դէպի վեր, ՎԱՍԻԼԵԻՍ (աղաւաղուած), ձախին՝ դէպի վեր, ՏԻԳՐԱՆՈՒ (աղաւաղուած):

Կշիռ՝ 3.90. տրամագիծ՝ 1.80:

10. Երես. Թաղաւորին կիսանդրին աջ դարձած, զլիտուն հինդ սեպերով հայկական խոյր: Խոյրին կեդրոնը քանդակուած է աստղ մը, երկու կողմը մէկական հանդիպահայեաց արծիւ, իրենց զլուխները դէպի աստղը դարձուցած: Շրջափակ զարդը՝ մարդարտաչար բոլորակ մը:

Առնակ. ամաղթեղջիւր մը ուղղահայեաց դիրքի մէջ: Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ/ՎԱՍԻԼԵՈՆ, ձախին՝ դէպի վար, ՏԻԳՐԱՆՈՒ: Եղբամասին մէջ, ամաղթեղջիւրին ներքեւ Δ Ի տառերը: Շրջափակ զարդը՝ մարդարտաչար բոլորակ մը:

Կշիռ՝ 2.63, տրամագիծ՝ 1.50:

11. Երես. Թիւ 10-ի նման: Խոյրին կեդրոնը վեցանկիւն աստղ մը:

Առնակ. աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ/ՎԱՍԻԼԵՈՆ, ձախին՝ դէպի վար, [Տ]ԻԳՐԱՆՈՒ: Մնացեալ մանրամասնութիւնները յար եւ նման թիւ 10-ի:

Կշիռ՝ 1.95, տրամագիծ՝ 1.50:

12. Երես. Թիւ 10-ի նման:

Առնակ. աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻ[Ս]/ՎԱՍԻԼԵՈ[Ն], ձախին՝ դէպի վար, [Տ]ԻԳՐԱՆՈՒ: Մնացեալ մանրամասնութիւնները յար եւ նման թիւ 10-ի:

Կշիռ՝ 2.35, տրամագիծ՝ 1.20:

13. Երես. Թաղաւորին սովորական կիսանդրին աջ դարձած, զլիտուն՝ հայկական խոյր եւ ապարօչ: Խոյրին կեդրոնը քանդակուած է խոշոր, ալյափոխուած աստղ մը: Շրջափակ զարդը՝ մարդարտաչար բոլորակ մը:

Առնակ. ուղղահայեաց, բարձր եռոտանիւր մը վրայ խոշոր, դողաւոր ըմպանակ մը, որուն մէջ երեք ոստեր դէպի վար գետեղուած են: Աջին՝ դէպի վար, ՎԱՍԻԼԵԻՍ, ձախին՝ դէպի վար, [Տ]ԻԳՐԱՆՈՒ: Դաշտին մէջ՝ ձախին, եռոտանիւր ոտքին մօտ Ի նշանը:

14. Երես. Թիւ 13-ի նման, բայց փոխանակ կիսանդրիի, թաղաւորին զլուխը՝ սովորական հայկական խոյրով եւ ապարօչով:

Առնակ. Թիւ 13-ի նման: Վարը՝ եղբամասին մէջ, Δ Ի Ի տառերը: Հետաքրքրական է նկատել որ նոյն տառերը կը տեսնուին

նաեւ Տրդրան Բ-ի այլ դրամներուն վրայ, օրինակի համար, Յաղթանակով կամ արմաւենիի ճիւղով դրամներուն վրայ: Աւելին՝ այս դրամներուն վրայ՝ խոյրին վրայ միայն աստղ մը կայ, եւ խորադրութիւնը «Արքայի Տրդրանի» է եւ ոչ թէ «Արքայից Արքայի Տրդրանի»:

Կշիռ՝ 2.28, տրամագիծ՝ 1.10:

15. Երես. թիւ 13-ի նման:

Կոնակ. թիւ 13-ի նման: Վարը՝ եզրամասին մէջ HTMD տառերը:

Կշիռ՝ 2.32, տրամագիծ՝ 1.30:

16. Երես. թաղաւորին սովորական կիսանդրին աջ դարձած, գլխուն՝ արքայական հայկական աստղօջ: Խոյրին կեդրոնը հինգ անկիւնով աստղ մը, որուն երկու կողմը մէկական արծիւ զետեղուած: Շրջափակ զարդը՝ մարգարտաշար բոլորակ մը:

Կոնակ. երկար, ուղղահայեաց ցօղուն մը, վերջաւորութեան երկու տերեւ եւ խոյր ծաղիկ մը, հաւանաբար լոտոս (lotus) մը: Աջին՝ դէպի վար, [ՎԱ.]ՍԻԼ[ԵԻՍ], ձախին՝ դէպի վար, [ՎԱՍԻ]-ԼԷՆ/ [ՏԻԳՐԱՆՈՒ]: Շրջափակ զարդը՝ մարգարտաշար բոլորակ մը:

Կշիռ՝ 1.28, տրամագիծ՝ 1.10:

17. Երես. թիւ 16-ի նման:

Կոնակ. թիւ 16-ի նման:

Կշիռ՝ 1.40, տրամագիծ՝ 1.30:

Դժբախտաբար 16 եւ 17 դրամները բաւական մաշած են եւ նկարներն ալ յաջող չեն:

18. Երես. թաղաւորին ղլուխը աջ դարձած հայկական խոյրով եւ աստղօջով (մասամբ մաշած): Շրջափակ զարդը՝ մարգարտաշար բոլորակ մը:

Կոնակ. փիղ մը դէպի աջ կ'ընթանայ: Վերեւը՝ ՎԱՍԻԼԵԻՍ, ներքեւը՝ [ՏԻԳՐԱՆՈՒ]:

Կշիռ՝ 2.00, տրամագիծ՝ 1.40:

19. Երես. թաղաւորին ղլուխը աջ դարձած, հինգ սեպաւոր, սովորական հայկական խոյրով: Շրջանակ զարդը՝ մարգարտաշար բոլորակ մը:

Կոնակ. ձի մը աջ դարձած, ղլուխը վար ծռած: Ինչպէս կը տեսնուի պատկերին վրայ, այս դրամէն փոքրիկ մաս մը կոտրած է թողարկման ժամանակ:

Այս դրամը տպուած է օտար դրամի մը վրայ, հաւանաբար հռոմէական կամ փիւնիկեան: Անոր երկու կողմերն ալ մասամբ ջըն-

Ջուած գիրքերու հետքեր կը տեսնուին, որոնք արդեւք կը հանդիսանան խորագիրին վերծանումին⁴:

Կշիտ՝ 4·80, տրամագիծ՝ 2·10:

ՏԻԳՐԱՆ Դ. (Ք. Ա. 8-5 եւ Ք. Ա. 2-Ք. Ե. 1 քք.)

Տիգրան Գ.ի յաջորդեց իր որդին՝ Տիգրան Դ.: Ան Հայաստանի դահլը բարձրացաւ պարթեւներուն, ե՛ւ Հայաստանի պարթեւասէր կուսակցութեան օգնութեամբ՝ առանց Հռոմի հաւանութեան: Այս արարքին հետեւանքով, հռոմէացիք մօտաւորապէս երեք տարի ետք, հզօր բանակով մը Հայաստան խուժեցին եւ Տիգրան Դ.ը գահընկէց ընելով գահ բարձրացուցին Տիգրան Գ.ի եղբայրը՝ Արտաւազդ Գ.ը: Արտաւազդ հռոմէական կրթութիւն ունէր եւ հռոմէասէր կը նկատուէր: Պարթեւներուն օգնութեամբ հայեր յաջողեցան Հայաստանի գտնուող հռոմէական բանակը կոտորել, եւ կրկին գահ բարձրացնել Տիգրան Դ.ը: Այս անգամ Տիգրան գահ բարձրացաւ իր կնոջ՝ Երատոյի հետ, որ միաժամանակ իր մօրմէ խորթ քոյրն էր⁵:

Տիգրան Դ.՝ գահակալական երկու շրջաններուն, ընդամէնը 6-7 տարիներ գահակալեց: Հակառակ այս իրողութեան, բաւական ճոխ զբամահատութիւն մը ունի ան: Անոր զբամները դիւրութեամբ կը զանազանուին. զինք բնորոշող մեծագոյն փաստը՝ ըստ պարթեւական ոճի, իր խիտ եւ երկար մօրուքն է:

Ուրեմն՝ Տիգրան Դ.ի զբամներու յատկանշական եւ բնորոշիչ տուեալներն են՝ խիտ եւ երկար մօրուք, թագաւորին գլուխը աջ դարձած, բարձր խոյր: Դրամներուն վրայի մակադրութիւնները երեք ձեւերով քանդակուած են՝ հորիզոնական շարքերով, ուղղահայեաց եւ իրարու զուգահեռական սիւնակներով, եւ քառակուսի: Տիգրան Դ.ի տիտղոսները կամ պատուանունները երկու ձեւ ունին.

1. ΒΑΣΙΛΕΩΣ/ΤΙΓΡΑΝΟΥ/ΜΕΓΑΛΟΥ [ՎԱՍԻԼԵԻՍ ՏԻԳՐԱՆՈՒՍ ՄԵԿԱԼՈՅ] Արքայի Տիգրանայ Մեծին

2. ΒΑΣΙΛΕΩΣ/ΤΙΓΡΑΝΟΥ [ՎԱՍԻԼԵԻՍ ՏԻԳՐԱՆՈՒ]: Արքայի Տիգրանայ:

4. Այս դրամէն երկու տարբերակներ հրատարակած ենք մեր նախորդ յոդուածներէն մէկուն մէջ: Տես՝ Ա. Տօնապետեան, Տիգրան Բ.ի եւ Տիգրան Գ.ի Մէկ Քանի Անտիպ Միական Դրամներ, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», Է. հտր., Պէյրուս, 1979, էջ 136, քիւ 9 եւ 10:

5. Այս հարցի մասին մանրամասնօրէն տես՝ Պերն Սապպաղեան, Տիգրան Դ.ի եւ Երատոյի Արիւնակցական Կապերու Հարցին Շուրջ, «Հայկագեան Հայագիտական Հանդէս», Է. հտր., Պէյրուս, 1979, էջ 121-129:

ՏԻԳՐԱՆ Դ.Ի ԴՐԱՄՆԵՐԸ : ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

20. Երես. Թագաւորին կիսանդրին աջ դարձած՝ խիտ եւ խոշոր մօրուքով, գլուխը հայկական խոյրով եւ ապարօշով: Խոյրին կեդրոնը՝ աստղ մը, որուն երկու կողմը մէկական արծիւ: Շրջափակ զարդը՝ մարդարտաշար բոլորակ մը:

Կռնակ. Արամազդ դէցը դահի վրայ, դէպի ձախ բազմած: Աջին՝ անընթեռնլի գրութեան հետքեր: Այս դրամէն օրինակ մըն ալ Պտուկեան կը նկարագրէ, ուր նոյնպէս գրութիւնը դրամին շրջափակէն դուրս մնացած է⁶:

Կշիռ՝ 1.58, տրամագիծ՝ 1.10:

21. Երես. Թագաւորին կիսանդրին աջ դարձած՝ խիտ, երկար մօրուքով, գլխուն կռնածեւ, հինգ սեպաւոր, հայկական խոյր եւ ապարօշ: Շրջափակ զարդը՝ մարդարտաշար բոլորակ մը:

Կռնակ. Արամազդ դէցը դահի վրայ՝ դէպի ձախ բազմած: Աջին՝ դէպի վար, ՎՍՍԻԼԵ[ԻՍ]/ՏԻԳՐԱՆՈՒ: Զախին՝ դէպի վար, ՄԵԿԱԼ[ՈՅ]:

Կշիռ՝ 7.67, տրամագիծ՝ 2.00:

22. Երես. աջ դարձած՝ խոյրերով զոյգ գլուխներ: Առաջինը՝ խիտ եւ երկար մօրուքով, որ անկասկած թագաւորն է: Իսկ երկրորդը՝ ի հարկէ Երատոյ թագուհին է, որ իր եղբօր հետ դահակալեց շուրջ երեք տարի: Շրջափակ զարդը՝ հանդուցաւոր երկգ մը:


Կռնակ. Բախտը՝ ձախ դարձած, դահի վրայ բազմած: Զախ ձեռքով ամաղթեղջիւր մը բռնած, իսկ աջով բռնած առարկան անորոշ է: Այս բոլորը ցածրաբանդակ (low-relief) ուղղանկիւնի մէջ: Գրութիւններ կան աջին, ձախին եւ ներքեւը, բայց անվերծանելի են: Հաւանաբար անոնք թագաւորին անունը եւ պատուանունը կը ներկայացնեն աղաւաղուած ձեւով: Խիտ շահեկան է այդ դրամը բազդատել Տիգրան Դ-ի այլ դրամներուն հետ: Տես՝ թիւ 23 եւ 24 նկարները, որոնք Տիգրան Դ-ին կը պատկանին եւ մեծ նմանութիւն ունին այս դրամին հետ: Անցեալին աւելի մանրամասնօրէն խօսած ենք Տիգրան Դ-ի դրամներուն մասին եւ զանոնք ցոյց տուած ենք զանազան նկարներով⁷:

6. P. Z. Bedoukian, *Coinage of the Artaxiads of Armenia* p. 75. no. 159.


7. Տես՝ Ա. Տօնապետեան, *Արտաշեսեան Հարստութեան Վերջին Գահակալներուն Դրամները*, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Ա. հտր., Պէյրուք, 1970. էջ 74-92:



S. U. S. U. 4 P.



13




19




14




20




15




21




16




22




17



23



18



24

Կշիռ՝ 9.65, տրամագիծ՝ 2.00 :

Տիգրան Բ-ի և Տիգրան Դ-ի պատկանող վերոյիշեալ քսաներկու դրամները, բոլորն ալ ցարդ մնացած են անտիպ : Այս դրամներէն ոմանք տարբերակներ են, ու մասամբ միայն կը տարբերին նախապէս հրատարակուած նոյնանուն թագաւորներու դրամներէն : Իսկ թիւ 5, 6, 9, 16, 17, 21 և 22 դրամները ամբողջութեամբ նոր են որպէս տիպարներ :

UNIQUE AND UNPUBLISHED COINS OF TIGRANES II AND TIGRANES IV

ASBED DONABEDIAN

(Summary)

Twenty two unpublished copper coins of the Artaxiad kings of Armenia are discussed in the article. In each case, the exact measurements, namely weight and diameter are given in grams and centimeters. The first 19 coins are attributed to Tigranes II, and coins numbered 20, 21 and 22 are attributed to Tigranes IV. The last two coins, numbered 23 and 24 also belong to Tigranes IV, but they are included only for the sake of comparison. Some of the coins differ slightly from already known or published coins; therefore they are mere variants. On the other hand, coins numbered 5, 6, 9, 16, 17, 21 and 22 represent altogether new types.

All coins discussed in the article, belong to the author's collection.